**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

10 դեկտեմբերի 2019թ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 82

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներից որոշում եմ՝

Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-097 -026-016 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքը հասցեավորել 17-րդ փողոց, 3 տուն հասցեն:

Համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Կիրակոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ 83

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՄԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՍՈՒՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ԵՎ ԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սասուն Աղասու Մարկոսյանի (ծնված 23.08.1977թ.) և Աննա Սեյրանի Ավագյանի (ծնված 15.03.1984թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը և տեղագրական հատակագիծը, բաժանորդի էպիկրիզը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը և հաշվի առնելով այն, որ ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի 5-րդ փողոցի թիվ 2 հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09623 հա մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Շենք -շինությունները կառուցվել են 1991-ից 2000 թվականներին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09623 հա մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1991թ.-ից: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

**որոշում եմ.**

1. Ճանաչել Սասուն Աղասու Մարկոսյանի և Աննա Սեյրանի Ավագյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի 5-րդ փողոցի թիվ 2 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 06-097-0014-0010 կադաստրային ծածկագրից 0.09623 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վերը նշված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ք ՀՀ Լոռու մարզ Սարահարթ համայնք 5-րդ փողոցի թիվ 2 բնակելի տուն:

Համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Կիրակոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

13.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ 84
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 101-րդ հոդվածով և << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով սեփականության իրավունքով Արամայիս Ֆիդանյանին պատկանող հողամասերից /վկայականներ N1130749,տրված 31 օգոստոսի 2004-ին, N1130735 տրված 31 օգոստոսի 2004-ին, N1128688 տրված 31 օգոստոսի 2004-ին, N1130738 տրված 31 օգոստոսի 2004-ին / հրաժարվելու մասին դիմումը՝

Որոշում եմ

1. Արամայիս Ֆիդանյանին, Վերգուշ Ֆիդանյանին, Հասմիկ Ֆիդանյանին, Եփրեմ Ֆիդանյանին, Սաթիկ Սարիբեկյանին Սուսան Ֆիդանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-097-145-43 կադաստրային ծածկագրում գտնվող 0.08հա, 06-097-104-127 կադաստրային ծածկագրում գտնվող 0.9հա, 06-097-119-25 կադաստրային ծածկագրում գտնվող 0.36հա, 06-097-143-28 կադաստրային ծածկագրում գտնվող 0.03հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Գլխավոր մասնագետին սույն որոշումն ընդունելուց հետո,սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով 15 օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմանը:
3. Գլխավոր մասնագետին հողամասի նկատմամբ իրավունքի հավաստող վկայականը ստանալուց հետո համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:
4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 20.11.2019թ թիվ 79 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Կիրակոսյան